ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հայտարարում է 2019-2020 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ՝ առկա ուսուցմամբ:

Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը տրվում է ինստիտուտի ռեկտորի անունով, կից ներկայացնելով բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ու դրանց հավելվածների պատճենները, կադրերի հաշվառման թերթիկը, 3x4սմ չափսի 3 լուսանկար, ինքնակենսագրություն, գիտական ռեֆերատ՝ ընտրած մասնագիտությունից կամ հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը:

Այս տարվա շրջանավարտ-դիմորդներից բարձրագույն կրթության դիպլոմի փոխարեն ընդունվում է համապատասխան տեղեկանք՝ դիմորդի բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճանի մասին:

Ընդունվողն անձամբ է ներկայացնում անձնագիրը և դիպլոմը, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «Օտար լեզվի» (անգլերեն՝ «TOEFL») և «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկաների ընդունելության քննությունների արդյունքները:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019թ. հունիսի 7-ը (ներառյալ):

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության ժամկետ է սահմանվում ս.թ. հունիսի 12-ը:

Դիմումները ներկայացնել հետևյալ հասցեով՝

ք.Երևան, Ալեք Մանուկյան 11,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,

հեռ.՝ (010) 55-33-10(1-22), (010) 55-33-10(1-17)